ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 ՀՈՒՆԻՍԻ N 58 54

«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով , որ «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-41/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2024 թվականի նիստում հանձնաժողովը ստուգելով Ինժեներինգ>> ՍՊԸ-ի և <<ՀՏ-Պրոյեկտ>> ՍՊԸ-ի փոխկապակցվածության և <<ՀՏ-Պրոյեկտ>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մինչև 22.06.2024թվականը ներառված լինելու վրաբերյալ Հայաստանի Հանրապետության Պետական վերահսկողական ծառայության կողմից Ապարանի համայնքապետարանի պաշտոնական էլ.փոստին 2024 թվականի մայիսի 27-ին ստացված Ե/1273-24 գրությամբ ի հայտ եկած հանգամանքները արձանագրել է, որ ընթացակարգի հաղթող մասնակից «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն հանդիսանալով <<ՀՏ-Պրոյեկտ>> ՍՊԸ-ի հետ փոխկապակցված անձ խախտել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 121-րդ կետի պահանջները և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա և բ) պարբերությունների պահանջները զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից և ընթացակարգը հայտարարել է չկայացած:

Ելնելով վերոգրյալից՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով:

Որոշում եմ

1. Սկսել՝ «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:
2. Սույն որոշման կատարումը հանձնարարել ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-41/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Հովսեփյանին:
3. Հանձնաժողովի քարտուղարին գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ